ԻԲՆ ԱԼ-ՖԱԿԻՀ
(մահ. 903-ից հետո)

Պարսիկ արաբագիր աշխարհագրագետ Աբու Բաքր Ահմադ իբն Մուհամմադ Իբն ալ-Ֆակիհը ծնվել է Իրանի Համադան քաղաքում, գրագետ ընտանիքում: Նրա կյանքի վերաբերյալ շատ բան հայտնի չէ: Ըստ երևույթին հեղինակ է երկու աշխատության: Դրանցից մեկը, որ ժամանակակից բանաստեղծների գործերի մի ծաղկաքաղ է եղել մեզ չի հասել, իսկ մյուսը՝ «Գիրք երկրների մասին» (Քիտար ալ-Բուլդան), որը գրել է շուրջ 903-ին, աշխարհագրական բնույթի է և կազմել է հինգ հատոր, բայց մեզ հասել է միայն դրանց հիման վրա կազմված սեղմ շարադրանքը, իրականացված ավելի քան հարյուր տարի անց՝ 1022-ին Ալի իբն Ջաաֆար ալ-Շայգարիի կողմից:

Այն գրված է գրական գեղեցիկ լեզվով և պարունակում է ոչ միայն զուտ աշխարհագրական տեղեկություններ, այլև ավանդություններ, առասպելներ, զրույցներ և այլ հետաքրքրական տեղեկություններ:

Հետագայում այս երկից մեջբերումներ է անում 13-րդ դարի մատենագիր Յակուտը: Իր երկում Իբն ալ-Ֆակիհը նկարագրում է մի ամբողջ շարք երկրներ, որոնք, ըստ նրանց հատկացված տեղի ու կարևորության, կարելի է դասավորել հետևյալ կերպ. Իրան, Արաբիա, Իրաք, Սիրիա, Եգիպտոս, Ռում, Ջազիրա, Նուբիա, Հաբեշստան. համառոտ ամփոփում է տրված Մաղրիբին, Անդալուսին և Սուդանին:

Ներկա թարգմանությունը կատարված է հետևյալ հրատարակությունից. Bibliotheca Geographorum Arabicorum, edidit M. J. De Goeje, Pars Quinta. Compendium libri Kitab al-Boldan, auctore Ibn al-Fakih al-Hamadhani, Lugduni-Batavorum, apud E. J. Brill, 1885.

(R. Blachère et H. Darmaun, Extraits des Principaux Géographes Arabes du Moyen Age, Paris, 1957, p. 70 , Ibn al-Fakih, H. Masse, EOI, CD-ROM, (III: 760b), Крачковский, IV, стр. 156*)*

Տե՛ս նաև.

1)Валидов А. З. Мешхедская рукопись Ибну-ль-Факиха. ИРАН, 1924, стр. 237-248.

2) Ибн ал-Факих, Ахбар ал-Булдан (Известия о странах) Введение, перевод с арабского, издание текста и комментарии А. С. Жамкочяна, Ереван, 1979.